ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 15.05.2019թ. ԹԻՎ 352-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ 23 մայիսի 2019թ,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Միհրան Հակոբյան կադրերի կառավարման բաժնի պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Լիաննա Մուսախանյան կադրերի կառավարման բաժնի օտար լեզուների գծով մասնագետ

Արտավազդ Գալստյանց ֆինանսատնտեսական ծառայության ծախսերի հաշվառման առաջատար տնտեսագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Եսայան իրավապայմանագրային և գնումների բաժնի մասնագետ

Հանձնաժողովի անդամ Վ.Խաչատրյանը գտնվում էր անաշխատունակության արձակուրդում, իսկ հանձնաժողովի անդամ Դ.Ավագյանը՝ գործուղման մեջ, և նիստին չմասնակցեցին:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը ՝ մեկ թվով արտահայտված՝ ըստ չափաբաժինների (ՀՀ դրամ)՝

Հ/հ	Չափաբաժնի անվանումը	Գինը
1	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ՝ ընկերության տնօրենների վերապատրաստման դասընթաց Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) պահանջների համաձայն	5 700 000 ՀՀ դրամ

Հրապարակվեցին «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-12/19» ծածկագրով գնանշման հարցման հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և էլեկտրոնային հասցեն՝

« Ազգային ստեղծարար միավորում» ՀԿ, nca.arm@gmail.com

«ՀԱՆ-ԳՀԾՁԲ-12/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի: Ընթացակարգի մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Հայտարարվեց մասնակցի գնային առաջարկը 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

Քանի որ «Ազգային ստեղծարար միավորում» ՀԿ կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է Ընկերության կողմից այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, որոշվեց կասեցնել նիստը և «Ազգային ստեղծարար միավորում» ՀԿ հրավիրել գների նվազեցման նպատակով բանակցությունների, որոնք տեղի կունենան 29.05.2019թ. ժամը 11.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ, Գասպարյան 33 հասցեում:

Ընդունվեց որոշում՝կողմ՝3, դեմ՝0

Միհրան Հակոբյան Արտավազդ Գալստյանց

Լիաննա Մուսախանյան Մարիամ Եսայան